ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ



ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ

ԶԱՔԱՐԻԱ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԶԱԳԵՑԻ
(855-877)

Զաքարիա Զագեցի Կաթողիկոսը Թ դարի և ընդհանրապես Հայ Եկեղեցու Հայրապետների փաղանգի մեջ ամենալուսավորյալ և պայծառ դեմքերից մեկն է, որ կարողացավ դժնի ժամանակներում լինել արթուն և իմաստուն վերադիտող իր հոտի համար: Երանաշնորհ Հայրապետի ընտրության պարագան իսկ վկայում է նրա ունեցած և վայելած այն հեղինակության մասին, որով աշխարհական կամ պարզ վանական վիճակում ընտրվեց Կաթողիկոս Հայոց՝ մեկ օրվա մեջ ստանալով հոգևոր բոլոր աստիճանները:

Նրա կյանքի մասին շատ տեղեկություններ և մանրամասնություններ դեռևս բացակայում են: Ոչինչ չկա նրա ծագման և Կաթողիկոսական բարձրագույն աստիճանին կոչվելու նախընթաց շրջանում զբաղեցրած դիրքի և վիճակի մասին: Մատենագրական աղբյուրները բավարարվում են նրան ներկայացնել «յանարատ ի կեանս կեցեալ», «այր սուրբ և առաքինի» և նմանատիպ այլ բնութագրումներով: Դատելով Հայրապետական շրջանի գործունեությունից, կարելի է ասել, որ բացառիկ պայմաններում նրա ընտրությունը ամբողջությամբ արդարացված և արժանի էր: Երանելի Հայրապետը իր կաթողիկոսության 22 տարիների ընթացքում, որ թե՛ հոգևոր և թե՛ քաղաքական իմաստով այնքան էլ պայծառ և խաղաղ չէին Հայ Եկեղեցու և Հայաստանի համար, բազմաջան գործունեությամբ փորձեց ոչ միայն պահպանել և պաշտպանել եղածը, այլև բարելավել ու բարեկարգել: Նահատակություններով և խոստովանական, վկայական մահերով հայտնի այդ ժամանակահատվածում նա ձեռնամուխ եղավ եկեղեցական միության խնդրին՝ այս առիթով թղթակցելով Կ. Պոլսի Փոտ Պատրիարքի հետ (որոնք ցավոք մեզ չեն հասել) և, դումարելով Շիրակավանի ժողովը (862թ.), մեծ իմաստությամբ Հայկական անկախ թագավորության դաղափարի շուրջ միավորեց բաժանված և պառակտված նախարարներին, կարողացավ զսպել արաբ արյունռուշտ ոստիկաններին և նախակարապետը դառնալ Հայկական նոր պետականության՝ Բագրատունյաց թագավորության:

Զաքարիա Զագեցին հեղինակ է նաև շուրջ երկու տասնյակի հասնող տոնախոսական ճառերի ու քարոզների, որոնք բանիբուն Հայրապետի Հոգեկիր և Աստվածամերձ ներաշխարհի լավագույն արտահայտություններն են:

Մխիթարյան Ուխտի միաբան և բազմավաստակ գիտնական Հ. Պողոս Անանյանը մեծ հմտությամբ՝ լայն ներածությամբ, քննական բնագրով և ծանոթագրություններով, հայ ընթերցողին է ներկայացրել մի ստվար հատոր, որը պարունակում է Զաքարիա Զագեցու տասնչորս ճառերը, որից էլ մենք քաղվածաբար կատարել ենք «Ի Մնունդն Քրիստոսի» ճառի աշխարհաբարի վերածումը:

Այստեղ, սակայն, հարկ ենք համարում նշել, որ մեծանուն գիտնականը իր կատարած երախտարժան գործի ներածականում, ուղղակի կամ անուղղակի կերպով, չամչյանական մոտեցմամբ, Զաքարիա Հայրապետին փորձում է ներկայացնել որպես քաղկեդոնական և Հռոմի Աթոռի բարձրագահությունը ընդունող, որին անպայմանորեն պիտի անդրադառնանք մեր ամսագրի առաջիկա համարներից մեկում: Այս ճառը աշխարհարարի վերածելիս մեր նպատակը չի եղել անդրադառնալ և արծարծել այս հարցը, այլ պարզապես հայ ընթերցողին հաղորդակից դարձնել մեր Տիրոջ Մեծդյան խորին խորհրդին: Աշխարհարարի վերածումը կատարել ենք քաղվածաբար և ցանկացել մասնավորաբար շեշտել այն հատվածները, որոնցով Աստվածակիր Հայրապետը ներկայացնում է Աստվածորդու Մեծությունը ոչ միայն մարդու, այլև մարդու անհնաղանդությամբ ողջ տիեզերքի ու տիեզերական չորս տարրերի (հող, օդ, ջուր, հուր) անկում ապրած վիճակի վերականգնումը:

ՏԵՐ ԶԱՔԱՐԻԱ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԱՍԻՆ

Քանզի, եթե մի որևէ թագավորի և ինքնակալ իշխանությամբ ամբողջ երկրի աշխարհակալ միահեծան պետության տիրոջի ծննդյան օրը որևէ մեկը ցանկանում է նշել և կամ սեղան բացել, [ապա] մեծ հնարամտություններով, խոհական խորհուրդով, խորագիտությամբ և նրբանկատությամբ է ջանք թափում իր նպատակը իրագործել՝ ըստ արժանվույն թագավորի:

...Իսկ մենք, որ արժանացանք տոնելու թագավորների երկնավոր թագավորի՝ անեղծ և մշտնջենավոր Աստուծո մեծ և հրաշափառ ծննդյան օրը, բերկրալից հրճվանքով, անկողոպտելի ուրախությամբ ցնծալով պիտի ցնծանք: Քանզի, որ Աստուծո կերպարանքն էր և Հոր էության նկարագիրը, կնիքն ու լույսը Մեծության պատկերի և Գատճառի փառքի ծագումը, անժամանակ և առանց ծորման ծնունդը Հորից, գերազանցը մտքի սահմանից, գեր ի վերո և անսկիզբը անսկիզբ Հորից, անպատմելին մարդկանցից և անծանոթը հրեշտակներից, ճառագայթն ու ճաճանչը Անեղի, Անժամանակը Անժամանակից, Անվայրափակը Անպարունակելիից, Անպարփակելին Անպարփակելիից, Անպարագրելին Անպարագրելիից, Որդին Հորից, Անեղի ծնունդը և Սուրբ Հոգուն փառակիցը, թագավորը սերովբեների, Իշխանը երկնավոր պետությունների[1], Հորն հավասար և զուգակիցը... ժամանակների լրումին Հոր և Սուրբ Հոգու կամքով Հայրական փառքից խոնարհվելով բնակվեց սուրբ Կույսի անարատ արգանդում: Եվ վերցնելով նրա մարմնի հատկություններից՝ մարմնավորվեց, ծառայական կերպով սաղմ-

---

1 Հրեշտակները ըստ տուրք հայրերի բաժանված են երեք դասի, որոնցից յուրաքանչյուրը ունի երեք աստիճան.
Ա. Աթոռք, Քերովբեք, Սերովբեք Բ. Տերությունք, Զորությունք, Իշխանությունք,
Գ. Պետությունք, Հրեշտակապետք, Հրեշտակք:

նավորվելով և սակավ առ սակավ աճմամբ հասնելով կատարյալ ամբողջականության, միացրեց անպարագրելի աստվածությունը՝ երկու եզրերը կատարյալ ի մի ամփոփելով:

...[ԱՑՍՕՐ] հինավուրցը մանկանում է, սերովբեների Թագավորը աստղերի միջոցով գուշակվում և մոգերից ընծաներով երկրպագվում: Անվայրափակ Բանը կենդանիների մսուրում է հանգրվանում, սակայն միաժամանակ Հոր հետ բազմելով փառքի Աթոռին: Դավթի որդին դրվում է գրկի մեջ, բայց և նույն իր խոսքով կրում բոլոր արարածներին: Ըստ մարմնավոր բնության կերակրվեց իր մարմնավոր ծնողից [Նա] Ով կերակրում է ստեղծվածներիս, Ով ձեռնատարած սնում է բոլոր արարածներին: Քանզի Կույսի որովայնում աստվածությունը միացավ մարդկայինին և իմ փրկության համար մարմինը, հոգին և միտքը միավորեց Իր անճառելի բնության հետ, որպեսզի նմանին նմանով մաքրի, լինելով մարդ ճշմարիտ՝ ծնված Կույսից մարմնով, հոգով և մաքուր մտքով:

...Մեծահարուստը ինձ նման տնանկացավ, որպեսզի ես Իր պատկերով զդեսատավորվելով փառավորվեմ: Լիառատը հեղվեց իմ դատարկ փոքրկությանս վրա, որպեսզի ես հաղորդակից դառնամ Նրա անճառ փառքին:

Անժամանակ Լույսից անստվեր Լույսի մարդկային բնությամբ նյութական մարմին առնելով [երկու] անգիտելի և այլազան բնությունները միավորվեցին դառնալով մի: Ինչպես երկաթն ու հուրը միախառնվելով ասվում է հուր՝ սև կամ ծիրանագույն [այնպես էլ] այս դեպքում [ասվում է] մի կերպարանք երկու բնություններից բաղկացած: Այսպիսով նորահրաշ և նորաձև եղան մի անձի, մի դեմքի և մի կերպարանքի մեջ անշփոթաբար միմյանց միացած աստվածային և մարդկային բնությունները, առանց փոփոխվելու Իր աստվածությունից, քանզի [Նա] անփոփոխելի է և անպարագրելի: Եվ Աստված պարփակվեց Կույսի որովայնում՝ պարագրելի մարմնում...

Անպարագրելին պարագրվեց Կույսի գրկում՝ անպարունակելին պարունակվեց և անչոչափելին շոչափելի դարձավ, քանզի «Մենք տեսանք Նրան և մեր ձեռքերը շոչափեցին Կենաց Բանը» (Ա ՀՈՎՀ. Ա 1), որ իջավ փրկելու արարածներին:

ԱՑՍՕՐ հոգեղեն անմահներին Անհասանելին հասանելի դարձավ կենագործելով արարածներին, Անիմանալին [որպես] այսօրածին մանուկ ճանաչվեց մարդկանցից: Հորից անճառ Բանը, ճառելի մարմնով Կույսի գրկում պարուրվեց, Անքննելին քննվեց, անկրելին կրելի դարձավ, անժամանակը սկիզբ ունեցավ, Աստուծո Որդին Կույսի որդի եղավ: Անմայր երկնքում և անհայր երկրում, անեղը եղականացավ, անստեղծը գոյության կոչվեց, աննյութականը երևաց նյութական մարմնով, անուրը[2] ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, անները երևաց աշխարհագրի օրերին: Անեզրը սահմանափակված դրվեց կենդանիների մսուրում, անսկիզբը սկզբնավորվեց Կույսից որպես մանուկ ծնվելով, անչափելին սահմանափակման մեջ դրվեց իր ամբողջական մարմնի չափերի պատճառով:

---

2 Անուր-որևէ տեղ և տեղից չեղող, անկետ, անսահման, անբովանդակելի:

ԱՑՍՕՐ անմահը հողեղենների մահկանացու բնությամբ դգեստավորվեց, հբեղեներից անըմբռնելին՝ ըմբռնվեց, անվայրափակը՝ ամփոփվեց, անպարփակելին՝ պարփակվեց, անտեսանելին՝ տեսնվեց: Ըստ գրքի. «Քրիստոս ծնվեց՝ փառավորենք, Քրիստոս մեզ համար խոնարհվեց երկնքից՝ ընդառաջ ելնենք, Քրիստոս մեզ համար վայր իջավ՝ դեպի ստորայիններս՝ վեր ելնք», քանզի սկզբնական խավարը պարարարձյալ[3] եղավ և անստվեր լույսը ծավալվեց ամբողջ տիեզերքում... քանզի անժամանակ մանուկը ծնվեց մեզ համար, որ նույն ինքը թագավոր է թագավորների և մարգարե և քահանա և պատարագ և բարձողը մարդկանց բոլոր մեղքերի՝ որ է անմայր երկնքում և անհայր երկրում:

ԱՑՍՕՐ Բանն Աստված ծնվեց քարայրում, որպեսզի մարդիկ երկինք հրավիրվեն, խանձարուրում պատվեց, որպեսզի պատռի սաղարթապատ և մաշկեղեն հանդերձը: Բոլորի Տերը բազմում է կենդանիների մսուրում, որպեսզի ես, որ հավասարվեցի չորքոտանի կենդանիներին, հրեշտակներին զուգահավասար լինեմ...

Եվ, երբ մեր Տերը ծնվեց քարայրում, Հերովդես արքայի երեսունեքեքերրոդ տարում՝ աշխարհագրի ժամանակ, ցոլացող աստղ երևաց արևելքում և ջահավորված ճառագայթներով փայլեց Պարսից աշխարհում, որը մոգերը տեսնելով, արթնացան քնից, և ճշտելով [ուղղությունը] հետևեցին աստղի ծագմանն ու ընթացքին: «Ո՞ւր» [— մտածում էին, —] որպեսզի նրա միջոցով փութային հասնել նորածին թագավորին երկրպագելու: Եվ աստղի ծագումը հրաշափառ, սքանչելի և զարմանալի էր...

Այդ ժամանակ մոգերը ճանապարհ ընկնելով դեպի Եփրաթի[4] կողմերը, տեսան աստղը, որ առաջնորդում էր իրենց արևելքից և լցվեցին ցնծությամբ: Նույնպես և աստղը նրանց տարավ այնտեղ որտեղ մանուկն էր: Եվ մոգերը լսած լինելով Բաղամի առակներից, թե նրա թագավորությունը ավելի վերագույն է քան Դոգինը՝ հասկացան նրա թագավոր լինելը (ԹԻՎՔ. ԻԴ 5-7, 8-9): Նաև այն, որ ասաց. «Պիտի ծագի Հակոբի աստղը»(ԹԻՎՔ ԻԴ 17), այդ խոսքի համաձայն ճանաչեցին նրա Աստված լինելը, և թե «Նա պիտի ննջի ինչպես կորյունն առյուծի և ինչպես առյուծ»(ԹԻՎՔ ԻԴ 9)՝ իմացան նաև նրա թաղվելու մասին: Այդ պատճառով էլ արևելքից իրենց հետ անհրաժեշտ իրեր էին բերել: Եվ ներս մտնելով ընկան մանուկի առջև, խոնարհվելով երկրպագեցին նրան ու բացելով իրենց դանձերը մատուցեցին խունկ որպես [նշան] Աստված լինելու, ոսկի՝ որպես թագավորի և զմուռա՝ որպես [խորհուրդ] աշխարհի փրկության համար մեռնելու: Եվ արդ՝ մենք միախորհուրդ սուրբ մարգարեներին ի վերուստ տրված կանխասացությամբ, հետևելով երջանիկ ավետարանիչներին, հակամետ լինելով մոգերի հետ և ձայնակցելով սուրբ հրեշտակներին, որոնք կարապետները եղան Տիրոջ ծննդյան, երգաբանում ենք հրաշափառ օրվա զորությունը:

---

[3] Պարարարձյալ-ըստ ՆԲՀ-ի «շուրջանակի ի բաց բառնալ ի միջոյ, ջնջված, ցրված»:

[4] Եփրաթ-Բաղեքի երկրորդ կիսն էր Ովրայի մայրը (Ա Մնաց. Բ 19): Ոմանք կարծում են, թե նրա անունով է կոչվում Բեթղեհեմը կամ Եփրաթ վայրը:

ԱՑՍՕՐ Հոր անմարմին Բանը մարմնանում է բանական հոգով, կատարյալ մտքով, նյութեղեն մարմնում պարունակվելով՝ Աստված է և մարդ՝ վերածնված Բեթղեհեմում:

ԱՑՍՕՐ Հոր կերպարանք Բանը թանձրանում է և անմատույց լույսից ճառագայթելով Կույսի արգանդում բաղադրյալ մարմնով մանկանում է ըստ մարդկային բնության օրենքի՝ իննամսյա ժամանակից հետո կատարելապես ծնվում է քարայրում, Աստված և մարդ լինելով: Նորաձև և հրաշափառ կերպով միախառնվում են բնությունները, քանզի մեր փրկության համար Բանի անեղծ և անմարմին բնությունը միանում է մեր նյութական և հողեղեն բնության հետ, որպեսզի մեր կերպարանքով զգեստավորվի և անմահալիներին վերստին միավորի:

ԱՑՍՕՐ տիեզերական ոլորտներում ցրվում է մեղքի խավարը և հաստատվում անստվեր լույսը:

ԱՑՍՕՐ Բեթղեհեմի քարայրը երկինք դարձավ, մսուրը՝ աթոռ քերովբեական, իսկ Բեթղեհեմը՝ երկիր ուրախության, քանզի երկնքում անմայրը անժամանակ Բանն Աստված անհայր ծնվեց երկրում, որպեսզի մենք բոլորի պատճառ եղողին Հայր վերակոչենք:

ԱՑՍՕՐ Մելքիսեդեկին է իր մեջ բովանդակում, անմայրն անհայր լինելով, քանզի մեզ համար այսօր մարգարե, թագավոր և քահանա ծնվեց:

ԱՑՍՕՐ ուրախանում է երկինքը և ցնծում երկիրը, քանզի հավիտյաններից առաջ [եղող] անսկիզբ Բանը տիրապես կամեցավ խոնարհվելով ծառայի կերպարանքով զգեստավորվել Կույսից՝ նախապես անապական սրբվածից, [աշխարհ] եկած Աստված և վերածնված որպես մարդ միշտ Հոր հետ լինելով:

ԱՑՍՕՐ ուրախացան վեցթևյան սրբասաց սերովբեները, քանզի Նրանից՝ Ում փայլակնացայտ և արփաճաճանչ լույսից զարհուրելով դողում են և թևասքողելով ծածկում իրենց դեմքերը, այսօր տեսնում էին [Նրան] անճառաբար մանկացած և խանձարուրում պատված հեթանոսների փրկության համար: Ցնծությամբ ուրախանում են բազմագունդ սերովբեները, քանզի անժամանակ Որդին, անստվեր Լույսը անժամանակ Լույս Հորից այժմածին մանուկ ծնվեց Բեթղեհեմում՝ [որպես] Քրիստոս Թագավոր, Մեսիա և Իշխան հոգեղեն պետությունների:

ԱՑՍՕՐ փառավորելով հրճվեցին պետությունները, քանզի Հորը և Սուրբ Հոգուն իսկակիցը[5] և արարիչը պետությունների, Իշխանը հոգեղենների Հոր մոտ լինելով մանուկ էմմանուել, որ նշանակում է Աստված հաճեցավ մեզ հետ լինել, ճշմարիտ մարդեղությամբ այժմ երկնքից իջնելով անմահության հաց եղավ մեզ համար:

ԱՑՍՕՐ ուրախացած զվարճացան հրեշտակներն ու հրեշտակապետները, որոնք սուրբ և անարատ Կույսից մարմնացած Բանի մասին երգում են «Փառք բարձրունքներում», որ սուրբ քարայրում իջևանելով ծնվեց Աստված և մարդ վերածնված և գերազանց քան եզականներիս բնությունը ներգործելով և ամփոփվելով պարագրվում է մարմնում անճառաբար՝ ըստ մարմնի հրեաներից, սակայն բոլորի համար Աստված լինելով օրհնյալ հավիտյան:

---

5 Իսկակից-Էակից, Նույնաէ, Համաէ, Նույն էությունից

ԱՑՍՕՐ ուրախացած զվարճանում են երկինքն ու երկնավոր զորութիւնները, քանզի անհասանելի Հոր անձնավորության լույսն ու էության նկարագիր Բանը, որ վերահանգչում է քառակերպյան անձեռագործ աթոռի վրա, տնօրինարար բազմել է կենդանիների մսուրում, անբաժանելի լինելով Հայրական ծոցից:

ԱՑՍՕՐ նորոգվելով պայծառացան երկիրն ու կենդանիները, քանզի հավիտյաններից առաջ եղող Հոր անիմանալի ծնունդ Որդին, այսօր անարատ սուրբ Կույսից մեր նման լինելով և կենագործելով մարդկանց, ընծաներով է պաշտվում արևելքի պարսկական զորականներից:

ԱՑՍՕՐ հրճվելով զվարճանում են Բեթղեհեմն ու այն քարայրը որտեղ Նա ծնվեց և ցնծում է երկիրը Եփրաթի, քանզի Հոր անսկիզբ Բանը քարայրում ծնվեց որպես էմմանուել մանուկ, որով Աստված մեզ հետ է, թագավոր Իսրայելի և կենագործող հեթանոսների:

ԱՑՍՕՐ հրճվելով ուրախանում է տիեզերքը անպարփակելի թագավորի ծննդյան համար, որ սուրբ Կույսից ծագեց մեզ համար բարձունքների արդարության արեգակը և հրանուտ ու արփիահրաշ ճառագայթներով ստորիններին ջահավորեց:

ԱՑՍՕՐ ցնծում են դաշտերն ու անտառները, քանզի Հոր էության նկարագիր և պատկեր անհասանելի և անբովանդակելի Բանը, այսօր հաճեց հողեղեն ծառայի կերպարանք ստանալ՝ անժամանակ Որդին և ժամանակների արարիչը ժամանակի մեջ մանկացավ:

ԱՑՍՕՐ ցնծում են լեռները, զվարճանում բլուրները, լուսավորյալ պայծառանում են անապատները և ճգնազգյաց սրբերը միանձնական դասերով, քանզի անեղանելին Աստված և փառքի թագավորը խոնարհվեց երկնքից և իջավ արարածներին փրկելու գոռոզից[6]:

ԱՑՍՕՐ զվարճացան համորեն ջրերը բոլոր զեռուններով, քանզի փառքի ծագումն ու ճառագայթը Հորից գալով մարդացավ Սուրբ Կույսից և բազմում է կենդանիների մսուրում, որին հովիվները տեսնելով ընծայաբեր էին լինում և հրեշտակների հետ երգաբանյալ աղաղակում. «Փառք բարձունքներում», որ առաքեց Բանը մեզ ի փրկություն: Պայծառանում է նաև արեգակը իր ոսկեճաճանչ ճառագայթներով բովանդակ և քաջահարմար[7] աստղերով, քանզի սքանչելագործ Աստուծո Որդին, Ում անբավելի բնությունը երկինքը չէր բավականանում ընդունելու, արարածների փրկության համար իջնանում է սուրբ քարայրում, անեղծության փառքի համար արարածներին ազատելով ապականության ծառայությունից:

ԱՑՍՕՐ ցնծում են ամբողջ աշխարհի հեթանոսները, քանզի Աստուծո Որդին իջնելով վերացրեց անեծքի պատուհասը և նեղ ու անձուկ ճանապարհը բացեց, [որպեսզի] անկյալ հրեշտակների փոխարեն մարդը վերաթեև դեպի [երկինք]:

ԱՑՍՕՐ ցնծալով բերկրում է սուրբ եկեղեցին, քանզի անհասանելի և անքննելի Հոր էությունից Բանը հրաշագործեց մեզ համար որպես

---

6 Գոռոզ-սատանա, չար:

7 Քաջահարմար-գեղեցկահարմար, բարեհարմար, ներդաշնակ:

արդարության արեգակ՝ պարագրված մարմնում մտքին և խոսքին անհասանելի կերպով, որի համար երկինքն օրհնում և երկիրը ուրախությամբ գովում է Սուրբ Հոգուն փառակցին:

ԱՑՍՕՐ ցնծալով բերկրում է վերին Երուսաղեմը և զվարճանում Սիոն մայր եկեղեցին, քանզի մեզ համար փայլակնացայտ լույսի վերարկողը[8] խանձարարուրում բովանդակվեց, որպեսզի նախաստեղծի պատրանքի պատճառով մերկացյալներին պճնելով զարդարի լուսազգեստ պատմուճանով՝ վերադասելով երկնքի հրեշտակների հետ:

ԱՑՍՕՐ փառքի թագավորը, որից զարհուրելով դողում էին հրեշտակների բյուրավոր բանակները, ծնվեց անապական կույսից, անտեսն ու անքնինը, քառակերպյաններից[9] վեհագույնը[10] խանձարուրում պատվեց՝ արևելքից երկրպագվելով ընծաներով:

ԱՑՍՕՐ անապական կույսից ծնվեց թագավորների թագավոր Քրիստոս և մակաստվված[11] արարչական պարգևները ծավալելով սփռեց ամբողջ տիեզերքում, որից արփիափայլված հեթանոսները մերկացան տխրական կարծրությունից, ում միշտ Իրեն կամական[12] չորեքկերպյան կենդանիների հետ միասին օրհնաբանում են մշտնջենավոր երգով:

...ԱՑՍՕՐ Սինա լեռան փոխարեն Բեթղեհեմն է հայտնում և (տասնաբանյայի) տախտակների փոխարեն Ավետարանը պարգևում մեզ, քանզի այն ժամանակ, որ անապատի անկեզ մորենու մեջ երևաց Մովսեսին և նա չէր համարձակվում մերձենալ ու դիտել (Նրա) տեսքը, այժմ խանձարրապատ հայտնվում է ամբողջ մարդկությանը: Այնտեղ Մովսեսն ասում էր. «Գնամ և տեսնեմ այն ահավոր տեսարանը»(ԵԼՔ Գ 3), իսկ այստեղ հովիվներն էին ասում. «Երթանք Բեթղեհեմ և տեսնենք, թե ի՞նչ տեսարան է գա»(ՂՈՒԿ. Բ 15): Եվ Նրան, որ ժամանակին Մովսեսը չկարողացավ տեսնել, թեպետև բազում անգամներ թախանձեց և միայն աղոտ կերպով թիկունքը նաև վեմով վարագուրված տեսավ, այսօր ժամանակների լրումին, Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, քարայրի մեջ բոլորի կողմից է տեսնվում, որը դիտելով ամբողջ տիեզերքը ուրախացավ և հրավիրվեց (մասնակցելու) անզրավ[13] ուրախությանը:

ԱՑՆ ԺԱՄԱՆԱԿ՝ անապատում, Իսրայելի բյուրավոր բանակներին կերակրում էր մանանայով և լորամարգիներով, այսօր անապական մարմինն ու սուրբ արյունն է ընծայում տիեզերքի փրկության և մեղքերի թողության համար՝ որպես հանդերձյալ անվախճան կյանքի առհավատչյա:

ԱՑՆ ԺԱՄԱՆԱԿ, որ ամպի և հրե սյունով էր առաջնորդում եբրայեցիների բանակին, այսօր ճառագայթող աստղով էր արևելքից առաջնորդում մոգերին դեպի քարայրը և լուսավոր ու արփիահրաշ ամպով կառավարում տիեզերքը՝ Վերին Երուսաղեմ Մեծ Սիոնում գտնվող արդարների հավիտենական հարկերը: Նա, ով հաճախ Մովսեսին ասաց. «Ես եմ Աբրահամի

---

8 Վերարկող-սկզբնավորող:

9 Քառակերպյան-քերովբեների հատկանիշը:

10 Վեհագույն-վերագույն, վեր գտնվող:

11 Մակաստվող-մակերեսին սփռված, այսինքն Իր մոտ եղած:

12 Կամական-կամակից:

13 Անզրավ-անավարտ, անեզր, անվախճան, անսպառ, անբավ:

Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը: Ես ինձ, որ փրկեմ Իսրայելի որդիներին Փարավոնի ձեռքից, որովհետև նրանց նեղության աղաղակը, որ նրանք կրում են եգիպտացիներից, հասավ ինձ», (ԵԼՔ Գ 6, 8), այսպես լսեցի մարդկային ցեղի ձայնը և ինձ փրկելու նրան անմարմին փարավոնից, որը պաշարեց մեղքով վիրավորելով: Նա՝ Ում Եղիան որպես լույս գերահրաշ երբեմն տեսնում էր Քորեբ լեռան վրա և չէր կարողանում մոտենալ անմերձենալի Աստուն, այլ թիկնոցով քողարկելով վարագուրում էր իր դեմքը. հավիտյանների ավարտին հայտնվելով Եփրաթում, մարմնով վարագուրյալ ծածկեց իր անհասանելի աստվածությունը՝ Քրիստոս բնակվելով մեր սրտում հավատքի ներգործությամբ:

Արդ, որովհետև արժանացանք այսպիսի հրաշափառ և գերամբարձյալ[14] այս տոնը տոնելուն, ընթանանք աստղերի հետ, մոգերի հետ ընծայաբեր լինենք, հովիվների հետ երկրպագենք, երկնային զորքերի հետ օրհնաբանենք և փառավորենք մարմնով ծնված Բանն Աստուն, որի հետ Հորը, միաժամանակ և Սուրբ Հոգուն փառք, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

---

[14] Գերամբարձյալ-հույժ բարձր, գերագույն: